

բիւրաւոր լեզուներու չարամուխ նետեր կ'արձակուէին, գոնէ նոյն ատեն կ'ըսենք, հարկ էր աւելի աչալուրջ ըլլալ: Հակառակորդք զօրաւորագոյն կողմնակից մըն ալ շահեցան յանձին Պէզճեան Գաղղաղ Յարութիւն Ամիրայի:

Գրիգոր իբրեւ պատասխանատու վարիչ՝ փողերանոցի ոսկւոյն վրայ իւր Միքայէլ եղբայրն եւ քանի մ'ուրիշ անձինք գրած էր, որոնց հաւատարմութեան կրնար վստահիլ: Միքայէլ հաշուեկշռոյն հաւասարութեան այնչափ ծանրակշռութիւն չէր դրած, եւ եղած պահանջքին ստուար գումարը գանձելու յարմարագոյն ժամանակի մը սպասած պահուն, յանդգաստս գրեթէ տարի մ'անցաւ: Յանկարծ երկրորդ տարին հաշիւ կը պահանջուի. եւ ահա — մէջտեղ կ'ելլէ հաշուոյ անհասարկ վիճակը: Պէզճեան Գրիգորին կը վաղէ եւ կշռոյն պակասը լեցընել կը խոստանայ. միտոյն թէ պայմանաւ՝ որ ոսկւոյն վրայ դրուողներն ի բաց արձակուին, եւ նոյն պաշտօնն իրեն (Պէզճեանի) յանձնուի: Բնականապէս այս ճգնաժամուն Գրիգոր յանձն կ'առնու պայմանն. բայց ասով Պէզճեան թշնամիներ կը գրգռէ, որոնք իրենց մերժման քինակնդիր վրէժը յագեցընելու եւ զԳաղղաղ յաշս Գրիգորի անարգ եւ անկարող ցուցընել կարենալու համար, ստակէն մաս մը կը խորեն կը պահեն: Գրիգոր յանհնարս մտնելով՝ ակամայ կը ստիպուի զՊէզճեան այն պաշտօնէն շարժել. բայց ասով ալ բնաւ օգուտ չի քաղեր, վասն զի Պէզճեան՝ որ առ ժամանակ մի ինք զինքը